ւոր և նախատինք հռոմէացւոց 'ի յաշխարհ, որովհետև 'ի բնական բնութենէ մերմէ և 'ի սովորութենէ տարբերութեան ժամանակէ տեսանեմք մեք այսքան ծայրագոյն զանազանութիւն որ մի և նոյն հռոմէացիք ընդ կայսերօք և ծերակուտօք իւրօք 'ի ժամանակի ընդ օրինօք անխախտելեօք վարիւք հատոր մի 'ի Օրինաց իւրեանց գրեցին՝ տալ յղի կանաց ամենայն ցանկութիւն սրտի նոցայ, զի մի գուցէ 'ի պատճառն փափագի սրտի նոցայ վիժեսցի երեխայն, և անդրադարձն նորայ մի և նոյն կայսր հռոմու Ներօն 'ի ժամանակի ինքնակալ տերութեան իւրոյ ոչ թէ միայն արտաքոյ Օրինաց նա ևս գազանաբարոյ ցանկութեամբ, նա ևս արտաքոյ արարմանց ընդ դէմ բնութեան ամենայն կենդանեաց պատառեաց յորովայն մօր, կատարելով գարշ ցանկութեան սրտի և ինքնակամ կամաց իւրոց, որովհետև բնութիւնս մեր երբեմն ձգտի առ 'ի գործ բարի և երբեմն առ 'ի գործս չար, ուրեմն հարկաւոր և յոյժ հարկաւոր է մեզ զի մի տացուք տեղի բնութեանս մերոյ, և մի զօրութիւն 'ի ձեռին ոչ ունիք զի ինքնակամ մտօք և ինքնակամ արարմամբ իշխեսցէ 'ի վերայ մեր, եթէ ոչ Օրինօք մերովք բարեօք, որ ամենայն ոք ամենայն բարիս կարող լինիցի գործել և 'ի չարեաց ոչ մի, զի սովաւ փրկեսցուք մեք որովայն ծնօղաց մերոյ պատառելոյ և արիւն անթիւ անօրէնութեամբ յեղելոց կրկին յեղ-